# Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Կիրակի, մարտի 27-ին, Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը:

Նախորդ օրը, երեկոյան, Մայր Տաճարում մատուցվեց ճրագալույցի Ս. Պատարագ, որի ընթացքում տրվեց Քրիստոսի հարության ավետիսը, և ավարտվեց Մեծ Պահքը: Պատարագիչն էր Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Ս. Հարության տոնի առավոտյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգևորականաց մեծահանդես թափորի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Մայր Տաճար, ուր մատուցեց Սուրբ և Անմահ Պատարագ և Սուրբ Զատկի առիթով Հայրապետական իր պատգամը հղեց հայ ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց բարեպաշտ ժողովրդին հայրերի լուսավոր օրինակով հաղթահարել բոլոր դժվարությունները, անցավոր ժամանակի մեջ, նյութականից դուրս փնտրել Աստծո նախախնամող սերը, հավատալ Հիսուսի հարության զորությանը և փրկչական առաքելությանը: «Հավատն է զատկական տոնի պատգամը: Հավատքով է սկիզբ առնում Փրկչի հետ մեր հարուցյալ կյանքը, հավատքով զորանում ու արգասավորվում: Հավատքով անձնվիրումը դառնում է բնական, մերձավորի հանդեպ սերը՝ երջանկության և ուրախության ակունք: Հարության խորախորհուրդ հրաշքն է այս, միշտ դեպի վեր, դեպի երկնայինը, ճշմարիտը, արդարն ու բարին: ...Ժողովուրդ հայոց, հավատիդ լույսով կյանքդ դարձրու աստվածփառաբանություն, որ գործերիդ մեջ սրտիդ զարկը տրոփի, սերդ շողա, արդարը, ճշմարիտը, բարին ընտրելու կամքդ հաղթանակի»,- նշեց Հայոց Հայրապետը (տե՛ս էջ 3):

Նորին Սրբությունը նաև իր Հայրապետական ողջույնն ու օրհնությունը հղեց աշխարհասփյուռ համայն հայ ժողովրդին, Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, ողջ հոգևոր դասին, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական ավագանուն և քույր Եկեղեցիների հոգևոր պետերին:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, գիտության, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սուրբ Պատարագի ավարտին Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում Վեհափառ Հայրապետն ամենքին ուղղեց Հայրապետական իր շնորհավորանքները Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*





ՈՏՆԼՎԱՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека





Ա. ՔԱՐՈԶՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
Բ. ՀԱՐՈՒԹՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ